Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է
Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
<< 15 >> 09 2011թ.

N 1799-Ա հրամանով

ՀՀ Առողջապահության նախարարության
Առողջապահության ազգային ինստիտուտի
Տնօրեն Մ.Ն.Ավագյան
«23» 12 2011թ.

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
«05» 09 1995 թ.
Գրանցման համար՝ 264.140.01712
Վկայական 016493
Հարկ վճարողի հաշվառման համարը
00011624
29.04.2002 թ. գրանցված
Կանոնադրության փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
տարածքային բաժնի կողմից

<<26>> 12 201 1 թ.

Տ/Բ պետ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

# <<ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս.Խ. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ>>

# ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն

# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Խ.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2.2 կետից հանել.

« • բժիշկների հետդիպլոմային կրթության, վերապատրաստման, որակավորման և վերաորակավորման պարտադիր ապահովումը.

- դասախոսական կազմի, ինչպես նաև առողջապահության կազմակերպման, ֆինանսավորման, հանրային առողջապահության մասնագետների պատրաստում և վերապատրաստում.»

2) 2.2 կետը լրացնել նոր ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

« • հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերի իրականացում.

• լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացում»

3) 2.3 կետից հանել՝

« • իրականացնում է բարձր որակավորում ունեցող բժշկական մասնագետների, դեղագետների, ստոմատոլոգների պատրաստումը,

• կազմակերպում է բժիշկների, ստոմատոլոգների, դեղագետների, միջին բուժանձնակազմի, դեղագործների գիտելիքների բարձրացման նպատակով հետդիպլոմային շարունակական կատարելագործման աշխատանքները:

4) 2.3 կետը լրացնել նոր ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ՝

« • բժշկագիտությանն ուղղված գիտելիքների ընդլայման ու նոր գիտելիքների ձեռքբերման նպատակով իրականացնում է հիմնարար գիտական հետազոտություններ

• գործնական նշանակություն ունեցող որոշակի խնդիրների լուծման նպատակով իրականացնում է գիտական հետազոտությունների և վերլուծությունների իրականացում

• իրականացնում է լրացուցիչ կրթական ծրագրեր»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության <<Ակադեմիկոս Ս. Խ. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության նոր խմբագրությամբ (գրանցված 29.04.2002թ.) բաղկացուցիչ մասը: